

«ԶԻ ԸՍՏ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՇԱՏԱՏԵՍՑԻ»

Երբ մարդ-անհապօք բոլորում է այսրաշխարհային կյանքի քառասուն գարփիները, անցնող այդ չորս դրամամյակները երևի թե անցնում են դարերայնորեն, որովհետք դվյալ անհապի կյանքն այդ ընթացքում անառարկելիորեն ուղղորդվում է իր ծնողների ուղղակի և անմիջական հսկողությամբ ու նրանց՝ կյանքի կուրպակած դարիների փորձառության հոգեգորով թելադրանքով: Օրինապահ և բարեպաշտ ընդունիք-ներում միմիշայն այդպես է ծևավորվում ու այնուհետև լիարժեքորեն կյանքի հունի մեջ մրգնում մարդ-անհապօք:

Դուք, իհարկեն, Վեհակառ Տեր, վաղ հասակից կյանքի այդ ուսումնառությունը ձեռք եք բերել ոչ թե Ձեր ընդունելիան անմիջական հարկի վակ, այլ առավել մի կյանքի դպրոցում, հոգնոր դպրոցում, Մայր Աթոռի արժանավոր միարանության և Ձերդ Սրբության անմիջական նախորդներից մեկի՝ երջանկահիշալուակ և լուսահոգի Վազգեն Ա Ամենայն Նայոց Կայտողիկոսի հայրական անձնական հսկողության և հոգագործառության ներքո:

Դուք կարծեք զրկված եք եղել երիկասարդական անմոռաց վայելքների ըմբռշինումից այդ դարիների ընթացքում, որովհետք Ձերդ Սրբությունն արդեն վաղ հասակից ինքնակամ ընծայվել է ազգին, Հայրենիքին և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բոլորանվեր ծառայելու նվիրական գործին:

Հավերժական ընթացք Ձեր անսխալական ընդրյալ ճանապարհին...

Ձերդ Սրբություն, Դուք ոչ միայն բոլորել եք այսրաշխարհային կյանքի այս չորս դրամամյակները, որ մարդկային կյանքի մի թվացյալ ակնթարթն է միայն, այլև թևակրիսել և իր լրումին եք հասցերել նաև հինգերորդը, որի յուրաքանչյուր դարին Ձերդ Սրբությանը շնորհել է խոհականության և իմասդնության որոշակի մի կուրպակում:

Լուսավորչի գահին արժանիորեն բազմելու Ձեր գահակալությունը ցավալիորեն համընկավ ժողովրդացունց մի իրողության: Տեղեկանալով այդ մասին, Դուք միայն մի քանի ակնթարթ կորցրեցիք Ձեր հավասարակշիռ ու լրջախոն կեցվածքը: Այնուհետև ասդիմանաբար դիրավելեցիք Ձեզ, կարծ ժամանակում ի մի բերեցիք Ձեր մվքերը և ապա շարունակեցիք Ձեր ասելիքն ու գործերը: Անժխսիելի է, որ Ձեր փոթորկուն մվքերի այդ ակնթարթային թոթափումը և ակնթարթային հավասարակշիռ վիճակին վերադառնալը գալիս է Ձեր իսկ անձի՝ ծննդավայրին բնորոշ խառնվածքից. դիմադրել և հաղթահարել բոլոր այն խութերն ու խոշնդրութերը, որոնք հառնել և հավանաբար հառնելու են դեռևս Ձերդ Սրբության առջև հետագա Ձեր ազգանվեր ու եկեղեցանվեր ծառայության և գործունեության ընթացքում:

Մեր ժողովուրդը դեռևս հուսառադ սպասելիքներ ունի Ձերդ Վեհակառության կենսախինդ ու ավշունով լեցուն անձից: Ամենայն Նայոց Հայրապետական Աթոռին բազմելու առաջին իսկ օրից Դուք անմնացորդ լծվեցիք և նվիվեցիք մեր ժողովուրդին և

Եկեղեցուն ծառայելու ամենանվիրական գործին: Մեկը մյուսի եփսից մեր հավաքավոր ժողովրդի առջև իրենց դռները բացեցին վերականգնված և վերակենդանացած, նաև նորակառուց նվազեցիները, որոնք այնքան անհրաժեշտ էին բասնամյակներ շարունակ բռնի կերպով անսարքվածության զաղափարախոսության մեջ դեգերող ու դառապղող մեր ժողովրդի համար: Նայասրանի անկախացումից հետո մեր ժողովուրդը երևի թե վերջնականապես և հավանաբար ընդմիշտ վերագրավ իրեն, դեպի վեր կարկառուց իր ձեռքերը և վսփահորեն, անթաքրույց հայացքով փառաքանց Երկնավոր Տիրոջը, որովհետո դասնամյակներ շարունակ նա գրկված էր եղել հոգեթով այդ առաքելությունից, թեև այդ ընթացքում մեր ժողովրդի մեծամասնությունը չէր մերժել իր բարեպաշտ հավաքը և թարուն կամ անթաքրույց շարունակում էր խոնարհվել ու պաշրել իր հավաքը՝ փառաքանելով Երկնավոր Տիրոջը և կամ զթասրբություն և մեղքերի թողություն հայցելով Ամենակարողից:

Ոչ միայն Ձեր՝ Լուսավորչի գահին բազմելուց հետո, այլև դրանից է շաբաթաօք, դեռևս Արքապետական Նայրապետական թեմի գործունեությունն անաշառորեն, խոճի մորք և անմենացորդ նվիրումով վարելու ընթացքում բացվեցին հոգեկերպ լուսավորության օջախներ, Նայրորդաց վներ և այլ մանկապատանեկան գեղագիտական ու մարմնակրթական հասկապություններ, որտեղ դաստիարակվում և ծնավորվում են հազարավոր բարեպաշտ պարանիներ և երիտասարդներ՝ հետքագայում, անշուշտ, իրենց գործունեությամբ պիտի լինելու ակնկալիքով իրենց ժողովրդին, Նայրենիքին ու Սուրբ Եկեղեցուն:

Թեև մաղթանքի խոսքը միշտ և հանապազ Վեհափառ Տիրոջն է վերապահված, բայց այս պարագայում մենք՝ սովորական մահկանացուներս, աղերսազին հայցում ենք Ամենազթառապ և Ամենազոր Տիրոջից, որ Նա շնորհի Ձերդ Սրբությանը անկուրում կամք և անբնկանելի կորով՝ շարունակելու և իր լրումին հասցնելու ժողովրդանվեր և եկեղեցանպաստ Ձեր բոլոր ծրագրերի ու նախադեսումների իրականացումը:

«Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկ. Բ 14):

**ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՄԱՆՅԱՆ
«ՀԶՄԻԱԾԻՆ» ԱՄՄԱԳՐԻ ՓՈԽՆՄԲԱԳԻՐ**